ընդ ծովն. զոր իբրեւ գնացին ընդ ծովն, բազումք խեղդեցան. եւ որք զերծան՝ հաստատեցին 'ի Գրիմոս: Ի սոյն ժամանակին յարեան մանկունքն Եփեսոսի ՃԳ.Թ. ամաց յետոյ, եւ գնացին առաջի Թէոդոսի, եւ դարձան 'ի յայրն իւրեանց, եւ իսկոյն ննջեցին 'ի Քրիստոս. որոց յիշատակաւ Տէր մեզ ողորմեսցի:

Մարկիանոս՝ յիշխանայն 'ի Կոստանդնուպօլիս եղեալ եղեւ թագաւոր, եւ Վաղենտիանոս յարեւմուտս թագաւոր, սկսան յամի Տեառն ՆԿ.Օ. ինքնակալեալք ամս Է: Սա Մարկիանոս՝ ըստ ոմանց փեսայ գոլ ասի Թէոդոսի՝ ընդ Պօղքեր քոյր նորա: Ի սոյն ժամանակին եւ հրամանաւ սորին եղեւ ժողովն Քաղկեդոնի ՍԼ.Օ. Եպիսկոպոսաց՝ աղաչանօք կնոջ իւրոյ Պօղքերի. զոր 'ի Նեստորէ մկրտեալ ասեն, եւ էր սիրելի Փլաբիանոսի եւ Թէոդորիտոսի, զորս նզովեցին յԵփեսոս. եւ Պօղքեր վասըն նոցա վրէժխնդրութեանն՝ ետ առնել